ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 31 /11

Քաղ. Երեւան **31 մայիսի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան, Ա.Հ.Աբգարյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. մայիսի 31-ի նիստում (արձանագրություն N4/2) քննարկեց «Արարատ Գրուպ» ՍՊԸ կողմից 2011թ. մայիսի 5-ին ներկայացված «ARARAT MINERAL WATER PRIRODNAYA MINERALNAYA PITEVAYA» (հայտի համարը N 20071375) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշման դեմ (հայտի համար 20071375) բողոքը:

Բողոքոքում ներկայացված փաստարկները հետևյալն են՝

11.12.2007թ «ԱՐԱՐԱՏ» բառը պարունակող համակցված ապրանքային նշանի գրանցման հայտ է (հայտի N 20071375) ներկայացրել ՀՀ մտավոր սեփականության գործակալություն:

27.12.2007թ հայտատուն ստացել է հարցում լրացուցիչ նյութեր ներկայացնելու մասին, որով պահանջված գործողությունները կատարվել են և 20.02.2008թ ներկայացվել է համապատասխան պատասխան:

10.03.2008թ. ստացել է ապրանքային նշանի գրանցման հայտը քննարկման ընդունելու մասին տեղեկանք: Որից հետո ներկայացված հայտի վերաբերյալ մինչև 29.04.2011թ.-ը որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Ընկերությունը, հաշվի առնելով իր կողմից ներկայացված ապրանքային նշանի գրանցման հարցի կարևորությունը, գրությամբ դիմել է գործակալությանը իր կողմից ներկայացված հայտի ճակատագրի վերաբերյալ որևէ տեղեկություն ստանալու խնդրանքով: 03.05.2011թ–ին ստացել է գործակալության թիվ 26–57 գրությունը, որով հայտնվել է, որ N 20071375 հայտով 2008թ. սեպտեմբերի 1-ին ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշում է կայացվել և փոստով ուղարկվել է իրենց ընկերությանը, սակայն այն 2008թ. հոկտեմբերի 15-ին հետ է վերադարձվել՝ փոստային ծրարի վրա «տեղափոխված» գրառմամբ: Նշվել է նաև, որ «Ապրանքային և սպասարկման

նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» համաձայն հայտը համարվել է հետ կանչված:

Ընկերությունը համաձայն չէ գործակալության ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կայացրած որոշման հետ, ինչպես նաև ապրանքային նշանի գրանցման հայտը հետ կանչված համարելու հետ հետևյալ պատճառաբանությամբ.

1. Ինչպես հայտը ներկայացնելու ժամանակ գործող «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 20.04.2000թ, թիվ ՀՕ–41, այսուհետ տեքստում նաև՝ նախկին օրենք, ուժը կորցրել է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով, ընդունված 29.04.2010թ., թիվ ՀՕ–59–Ն, այսուհետ տեքստում նաև՝ գործող օրենք), այնպես էլ գործող «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը հայտատուի կողմից որևէ պատճառով չստանալու դեպքում հայտը հետ կանչված համարելու մասին որևէ նորմ, դրույթ, պահանջ չեն պարունակում: Ինչպես նախկին, այնպես էլ գործող օրենքները սահմանում են ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումն ստանալուց հետո այն եռամսյա ժամկետում բողոքարկման խորհուրդ բողոքարկելու հայտատուի իրավունքը, մասնավորապես նախկին օրենքի 13–րդ հոդվածով և գործող օրենքի 47–րդ հոդվածով: Փաստորեն, ապրանքային նշանի հայտը հետ կանչված համարելու հիմք է հանդիսացել «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը», որով սահմանափակվել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշման բողոքարկման իրավունքի իրականացումը:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9–րդ հոդվածի բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների սահմանափակումները, իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը: Հետևաբար, կարգով չի կարող սահմանվել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների սահմանափակումներ, իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմաններ և կարգ, այլ կերպ քան օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում և սահմաններում, որը տվյալ դեպքում բացակայում է, ուստի գործակալության կողմից կիրառված կարգի նշված նորմը իրավական ուժ չունի, կիրառելի չէ, և գործակալությունը չպետք է կիրառեր նշված նորմը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60–րդ հոդվածի համաձայն գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին սույն օրենքի 59–րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59–րդ հոդվածի համաձայն վարչական ակտի ընդունման մասին վարչական մարմինը

իրազեկում է սույն հոդվածով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով: Հանձնումը կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, առձեռն հանձնելու միջոցով, իսկ հրապարակումը վարչական մարմնի տեղեկագրում կամ այլ պաշտոնական տեղեկագրում հրատարակելու միջոցով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակելով: Բողոքում նշված է, որ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը որևէ կերպ չի հրապարակվել, իսկ փոստով պատվիրված նամակով ուղարկված որոշումը վերադարձել է, այսինքն այն ստանալու մասին ծանուցումը բացակայել է: Նշված է նաև, որ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը հայտատուն ստացել է 03.05.2011թ–ին՝ առձեռն: Համադրելով վերոնշյալը՝ ակնհայտ է, որ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը հայտատուն ստացել է 03.05.2011թ–ին և այն ուժի մեջ է մտել 04.05.2011թ–ին:

Բողոքում նշված նաև, որ և՛ նախկին օրենքը և՛ գործող օրենքը ապրանքային նշանների գրանցումը մերժելու մասին որոշումների բողոքարկումը պայմանավորում են այն հայտատուի կողմից ստանալու փաստով, մասնավորապես նախկին օրենքի 13–րդ հոդված, գործող օրենքի 47–րդ հոդված, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71–րդ հոդվածի համաձայն վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից: Նշեմ որ բողոքարկման ժամկետները ևս հաշվարկվում են հայտատուի կողմից որոշումն ստանալուց կամ որոշումն ուժի մեջ մտնելուց սկսած՝ մասնավորապես նախկին և գործող օրենքներով սահմանված եռամսյա կամ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված վեցամսյա ժամկետները:

Թիվ 20071375 հայտով 01.09.2008թ. կայացված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշման հիմքում դրվել է նախկին օրենքի 41–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ պարբերությունը և կարգի 93.5–րդ կետի 2–րդ պարբերությունը, համաձայն որոնց «նշանը չի կարող գրանցվել, քանի որ ապրանքային նշանում տեղանունն օգտագործվում է միայն գերիշխող մաս համարվող որևէ բառային նշանի (առևտրային անվանման) զուգակցմամբ»: Սակայն նախկին օրենքը ուժը կորցրել է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով, իսկ «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ապրանքի ծագման տեղանունը չի տարածվում բնական և հանքային ջրերի նկատմամբ և ապրանքի ծագման տեղանունների գրանցումները և դրանց օգտագործման իրավունքի վկայագրերը ուժը կորցրել են 01.01.2011թ–ից, այդ թվում նաև «ԱՐԱՐԱՏ» ապրանքի ծագման տեղանվան: Հետևաբար վերացել է նաև որոշման հիմքում դրված մերժման հիմքը: Այսինքն տեղի է ունեցել փաստական հանգամանքի փոփոխություն հօգուտ հայտատուի: Այսինքն՝ նույնիսկ, եթե վիճարկվող որոշումը գործակալությունը համարի որպես անբողոքարկելի, ապա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51–րդ հոդվածի 1–ին մասի «ա» ենթակետի համաձայն վարչական մարմինը՝ վարույթի մասնակիցների դիմումի հիման վրա, պարտավոր է որոշում ընդունել

բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, եթե վարչական ակտն ընդունելուց հետո դրա հիմքում դրված փաստական հանգամանքները կամ ակտի հասցեատիրոջ կարգավիճակը փոփոխվել են հօգուտ այն անձի, որը վարույթը վերսկսելու հարցով դիմում է ներկայացրել: Նույն հոդվածի 3–րդ մասի համաձայն, դիմումի հիման վրա որոշում է ընդունում այն վարչական մարմինը, որն ընդունել է փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու ենթակա վարչական ակտը, կամ այդ ակտն օրենքով վարչական վարույթի վերսկսման միջոցով անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու իրավասություն ունեցող համապատասխան կամ իրավասու այլ վարչական մարմինը: Տվյալ դեպքում և՛ նախկին օրենքը, և՛ գործող օրենքը սահմանում են, որ փորձաքննության որոշումները կարող են բողոքարկվել գործակալության բողոքարկման խորհուրդ, որը և իրավասու է անվավեր ճանաչելու կամ փոփոխելու ընդունված որոշումը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ բողոքարկողը խնդրում է ներկայացված բողոքը համարել նաև դիմում, որը ևս ներկայացվում է գործակալության բողոքարկման խորհուրդ:

Կոլեգիայի քննարկման արդյուքը ներկայացնելիս նշվեց, որ հայտատուն խնդրել է բողոքը ընդունել վարույթ, վերանայել և անվավեր ճանաչել թիվ 20071375 հայտով 01.09.2008թ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը և ընդունել թիվ 20071375 հայտով ներկայացված ապրանքային նշանի գրանցման մասին որոշում, կամ փոփոխել թիվ 20071375 հայտով 01.09.2008թ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը՝ թիվ 20071375 հայտով ապրանքային նշանի գրանցման մասին որոշման:

Քննարկելով բողոքը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում կոլեգիան պարզել է հետևյալը:

«Արարատ գրուպ» ՍՊԸ–ն 11.12.2007թ–ին գործակալություն «ԱՐԱՐԱՏ Mineral Water Природная минеральная питьевая» բառերը պարունակող համակցված ապրանքային նշանի գրանցման հայտ է ներկայացրել՝ հայտի համար թիվ 20071375, ԱԾՄԴ (ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման) 32–րդ դասի «հանքային և գազավորված ջրեր, մրգային ըմպելիքներ» ապրանքների համար: 27.12.2007թ հարցում է արվել պակաս վճարված պետական տուրքը վճարելու և պետական տուրքի վճարման անդորրագիրը ներկայացնելու մասին: 21.02.2008թ «Արարատ գրուպ» ՍՊԸ–ն ներկայացրել է պահանջված պետական տուրքի վճարման անդորրագիրը: 10.03.2008թ. տրվել է ապրանքային նշանի գրանցման հայտը քննարկման ընդունելու մասին տեղեկանք: 01.09.2008թ կայացվել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշում, որը փոստով ուղարկվել է հայտատուին հայտում նշված հասցեով՝ 0625, ՀՀ, Արարատի մարզ, գ. Դաշտաքար: 15.10.2008թ ստացվել է փոստային անդորրագիրը «տեղափոխված» նշումով: Որից հետո,

ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (հաստատված ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12 ապրիլի 2005թ թիվ N 85–Ն հրամանով, այսուհետ տեքստում նաև կարգ) 40–րդ կետով հայտը համարվել է հետ կանչված և գործավարությունը դադարեցվել է: 29.04.20112-ին «Արարատ գրուպ» ՍՊԸ–ն գրություն է ներկայացրել գործակալություն խնդրելով իրեն տեղեկացնել համար թիվ 20071375 հայտի ճակատագրի մասին: Գործակալությունը 02.05.2011թ–ի N26–57 գրության կից հայտատուին է հանձնել ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը, որը հայտատուն ստացել է առձեռն 03.05.2011թ–ին:

Բողոքարկման խորհուրդը փաստում է նաև, որ «ԱՐԱՐԱՏ Mineral Water Природная минеральная питьевая» բառերը պարունակող համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը որևէ կերպ չի հրապարակվել:

Ինչպես «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 20.04.2000թ, թիվ ՀՕ–41, այսուհետ տեքստում նաև՝ նախկին օրենք, ուժը կորցրել է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով, ընդունված 29.04.2010թ., թիվ ՀՕ–59–Ն, այսուհետ տեքստում նաև՝ գործող օրենք), այնպես էլ գործող օրենքները սահմանում են ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումն ստանալուց հետո այն եռամսյա ժամկետում բողոքարկման խորհուրդ բողոքարկելու կամ կրկնական փորձաքննություն խնդրարկելու հայտատուի իրավունքը, մասնավորապես նախկին օրենքի 13–րդ հոդվածով և գործող օրենքի 47–րդ հոդվածով: Հայտը հետ կանչելով հայտատուն զրկվում է ապրանքային նշանի գրանցման մերժման մասին որոշման բողոքարկման իր իրավունքից կամ առնվազն սահմանափակվում է հայտատուի կողմից ապրանքային նշանի գրանցման մերժման մասին որոշման բողոքարկման իրավունքի իրականացումը: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9–րդ հոդվածի համաձայն բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների սահմանափակումները, իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը: Տվյալ դեպքում հայտը հետ կանչված է համարվել կարգի 40–րդ կետի համաձայն: Հայտի քննարկման ժամանակ գործող նախկին և ինչպես նաև գործող օրենքը ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը հայտատուի կողմից չստանալու դեպքում հայտը հետ կանչված համարելու մասին որևէ նորմ, դրույթ, պահանջ չեն սահմանում, ինչպես նաև չեն սահմանում այն կարգերով սահմանելու որևէ դրույթ: Հետևաբար, կարգով չի կարող սահմանվել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների սահմանափակումներ, իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմաններ և կարգ, այլ կերպ քան օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում և սահմաններում, որը տվյալ դեպքում բացակայում է: Ուստի, կիրառված կարգի նշված նորմը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ այն հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Եվ՛ նախկին օրենքը և՛ գործող օրենքը ապրանքային նշանների գրանցումը մերժելու մասին որոշումների բողոքարկումը պայմանավորում են այն հայտատուի կողմից ստանալու փաստով, մասնավորապես նախկին օրենքի 13–րդ հոդված, գործող օրենքի 47–րդ հոդված, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71–րդ հոդվածի համաձայն վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից: Կոլեգիայի անդամի կողմից նշվեց, որ բողոքարկման ժամկետները ևս հաշվարկվում են հայտատուի կողմից որոշումն ստանալուց կամ որոշումն ուժի մեջ մտնելուց սկսած՝ մասնավորապես նախկին և գործող օրենքներով սահմանված եռամսյա կամ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված վեցամսյա ժամկետները: Հայտատուն ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը ստացել է 03.05.2011թ–ին՝ առձեռն, ուստի օրենքներով սահմանված բողոքարկման ժամկետները ևս հաշվարկվում են 03.05.2011թ–ից, քանի որ օրենքով այլ բան նախատեսված չէ:

Բացի դա, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51–րդ հոդվածի 1–ին մասի «ա» ենթակետի համաձայն վարչական մարմինը՝ վարույթի մասնակիցների դիմումի հիման վրա, պարտավոր է որոշում ընդունել բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, եթե վարչական ակտն ընդունելուց հետո դրա հիմքում դրված փաստական հանգամանքները կամ ակտի հասցեատիրոջ կարգավիճակը փոփոխվել են հօգուտ այն անձի, որը վարույթը վերսկսելու հարցով դիմում է ներկայացրել: Թիվ 20071375 հայտով 01.09.2008թ. կայացված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշման հիմքում դրվել է նախկին օրենքի 41–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ պարբերությունը և կարգի 93.5–րդ կետի 2–րդ պարբերությունը, համաձայն որոնց «նշանը չի կարող գրանցվել, քանի որ ապրանքային նշանում տեղանունն օգտագործվում է միայն գերիշխող մաս համարվող որևէ բառային նշանի (առևտրային անվանման) զուգակցմամբ»: Սակայն, նախկին օրենքը ուժը կորցրել է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով, իսկ «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքի՝ մասնավորապես 1–ին և 44–րդ հոդվածների, համաձայն ապրանքի ծագման տեղանունը չի տարածվում բնական և հանքային ջրերի նկատմամբ և ապրանքի ծագման տեղանունների գրանցումները և դրանց օգտագործման իրավունքի վկայագրերը ուժը կորցրել են 01.01.2011թ–ից, այդ թվում նաև «ԱՐԱՐԱՏ» ապրանքի ծագման տեղանվան: Հետևաբար վերացել է նաև որոշման հիմքում դրված մերժման հիմքը: Այսինքն տեղի է ունեցել փաստական հանգամանքի փոփոխություն հօգուտ հայտատուի:

Նկատի ունենալով, որ որոշումը լիովին համապատասխանում է դրա ընդունման պահին գործող օրենքին և հաշվի առնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51–րդ հոդվածի 1–ին մասի «ա» ենթակետը, անհրաժեշտ է կիրառել նույն օրենքի 66-րդ

հոդվածի 3-րդ մասը, չեղյալ ճանաչել վիճարկվող որոշումը: Միևնույն ժամանակ հաշվի առնել, որ որ ներկայացված ապրանքային նշանը բովանդակային առումով կարող է գրանցվել միայն հայտում նշված «հանքային և գազավորված ջրերի» համար:

Համադրելով վերոգրյալը բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման» կարգի 68-րդ կետի 1-ին ենթակետով՝ բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Արարատ Գրուպ» ՍՊԸ բողոքը, «ARARAT MINERAL WATER PRIRODNAYA MINERALNAYA PITEVAYA» (հայտի համարը N 20071375) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը չեղյալ ճանաչել և «ARARAT MINERAL WATER PRIRODNAYA MINERALNAYA PITEVAYA» (հայտի համարը N 20071375) ապրանքային նշանը գրանցել հայտարկված հանքային և գազավորված ջրերի համար:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա.Ազիզյան